վարտ, Հալիձոր և այլ գյուղերում հանքերի տնայնագործական շահագործման եղանակները, հանքահանման և հանքահալեցման պրոցեսներն անցել էին ավելի կատարելագործված տեխնիկական ձևերին։ Առանձին կապիտալիստներ՝ Խոջամիրյաններ, Մելիք-Ազարյան, Կոնդուրովներ և այլք արդեն դիմում էին մասնագետ ինժեներների փորձին արտադրությունը ավելի շահավետ և կանոնավոր հիմքերի վրա դնելու համար։ Այդ աշխատանքներն ավելի կանոնավորվեցին, երբ հանքերն անցան մասնավոր ֆրանսիական ընկերության ձեռքը։ Մուծած նորություններից էր և էլեկտրակայանի կառուցումը Ողջի (Օխչի) գետի հոսանքի էներգիայի օգտագործմամբ Ջրախորում։ Գործարաններին կից կառուցվում էին բանվորական հանրակացարաններ, հիմնվում էին նրանց սպասարկող և խիստ շահագործող բնույթ կրող խանութներն ու արհեստանոցները։ Դաշնակցության կառավարության օրով հանքահանությունը, գրեթե, բոլորովին ընդհատվել էր, և հանքավայրերը սովետական իշխանությանը անցան բոլորովին քայքայված վիճակում։ Կարճ ժամանակամիջոցում կրթվեցին նոր բանվորական կադրեր, փոխվեց օգտագործման ամբողջ ստրուկտուրան, դառնալով սոցիալիստական, գործադրվեց գիտության մշակած վերջին կատարելագործված տեխնիկան։ Ընդարձակված է էլեկտրական ուժի գործադրությունը գործառնության բոլոր մոմենտներին— հանքափորությունից սկսած մինչև մաքուր պղնձի ստացումը, հիմնված է ֆլոտացիոն գործարանը։ Բանվորության համար հանքավայրում աշխատանքը չի մնացել որպես օժանդակ աղբյուր իր տարեկան բյուջեի համար, որի մեջ հողամշակությունից ստացած եկամուտը բռնում էր առաջնակարգ տեղ։ Նա արդեն անցել է գրեթե բացառապես գործարանային աշխատանքին։ Վերակառուցվել է ամբողջ ներքին կյանքը և դրա հետ միասին փոխվել է և՛ հանքավայրի, և՛ մերձավոր գյուղերի պատկերը։ Կապան-Հանքերն իր բնույթով արդեն ոչ թե մի գյուղ է՝ կոպիտ կառուցված բանվորական հանրակացարաններով, այլ ամբողջովին ստացել է փոքրիկ գործարանային քաղաքի տեսք՝ իր գործարանային նոր կառուցումներով, իր ճարտարապետորեն ձևավորված բանվորական լույս և առողջ բազմահարկ ու գեղեցիկ ուրախ շենքերով, իր հյուրանոցով, ճաշարաններով, կինո-սրահով, թատրոնով, դպրոցով, խանութների և արհեստանոցների շարքերով, մասնավոր բնակարաններով։ Փոխվել է և մերձակա գյուղերի բնույթը։ Բեխ, Վաչագան, Բարաբաթում (Պառավաթումբ), Գեղանուշ (Գյուտկում), Կատար, Կավարտ գյուղերը վեր են ածվել բանվորական ավանների, որոնք իրենց կյանքը ամբողջովին միաձուլել են հանքերի մշակման հետ։ Այս հեղափոխիչ շարժումով ընդգրկված էր ըստ 1939 թ. մարդահամարի 8511 մարդ, որոնցից 7331 հայ, 444 ադրբեջանցի, 531 ռուս։ Ալյաթ—Ջուլֆա երկաթգծի Մինջևան կայարանից դեպի Կապան-Հանքերը բաժանող ճյուղը փոխել է ամբողջ Զանգեզուրի ապրանքափոխանակության ուղին։ Գորիսն իր հին հանգուցային նշանակությունը կորցրել է։ Կապան-Հանքերն է, որի միջով անցնում է և՛ ներմուծվող, և՛ արտահանվող ապրանքների հոսանքը։ Նրա աշխուժացումը դեպի ինքն է քաշում և հարևան շրջանների ավելորդ բանվորական ուժը։

Զանգեզուրի երեք վարչական շրջանների բոլոր գյուղերում կոլխոզային շինարարության հետևանքով քանդվել են հին կենցաղի հիմքերը, և բնակավայրերի բնույթն արագ կերպարանափոխվում է։ Մի երկրում, որը «անիվ չգի-